ԽՈՐԵՆԱՑԻԻ ՊԱՏՄԱԳՐՔԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ (Կալիֆորնիա, ԱՄՆ)

Հիմա որ կարգ մը բանասերներու՝ Պատմահայրը մինչև IX դար տանելու խոլական մարդանքներուն իրարանցումը հանգած է, և Խորենացին կրկին դարձած է V դար, չափազանց հետաքրքրական է իմանալ, թե արդյոք սույն դարու ո՞ր տարին կամ տարիներուն ան գրած կրնար ըլլալ իր եզական հատորը։

Առ այդ, մեր պրպտումներու սկզբին ի մտի կունենանք, թե հին գրքի մը գրության ժամանակը որոշելու երկու կերպ կա։ Առաջին՝ ուրիշ մատենագիրներ այդ մասին ուղղակի կամ անուղղակի տեղեկություն հայթայթած կրնան ըլլալ իրենց գրքերուն մեջ։ Երկրորդ՝ եթե ուրիշներ այդ մասին լուռ են, մեզի կը մնա մանրազնին քննության ենթարկել սույնինքն գիրքը՝ տեսնելու, թե արդյոք հոն կրնա՞նք գտնել ցուցմունքներ, որոնք ճիշտ թվական մը մատնանշեն։

Խորենացիի մասին համառոտակի, ողբալիորեն համառոտակի, հիշատակություն ընող մեր հին մատենագիրները Պատմագրքի գրության ժամանակի վերաբերմամբ ոեվ ակնարկություն չունին։ Որով ստիպված ենք միմիայն անոր գրքի ուսումնասիրությամբ փորձել լուծելու մեզ հետաքրքրող հարցը։

Այժմ բանանք տիեզերահռչակյալ (Թովմա Արծրունիի բառով) քերթողահոր համբավավոր հատորը և ետ ու առաջ, վեր վար դարձնելով, նայենք ո՞ւր կրնանք հասնել։

Երբ իր մասին գրելուն կը հայտնե, թե ինք Սահակի և Մեսրոպի աշակերտ է և անոնց հողմե Ադեղսանդրիա գրկված, ալ կասկած չենք ունենար, որ մեր հեղինակը V դարու մարդ է։

Կը կարդանք իր գրքի վերջին էջերը տեսնելու, թե ինչ պատմական դեպքի հիշատակություն կա, որ քաջածանոթ ըլլա մեզի, մանավանդ թվականով— Մեսրոպի մահը և թաղումը 440 թ. (Գ. 67)։ Ուրեմն, կեղրակացնենք, Խորենացին այդ թվականեն վերջ գրած ըլլալու է։

Վերջին գլուխը (Գ. 68) նշանավոր Ողբն է։ Երբ այդ բիչ մը ավելի կեղրոնացած ուշադրությամբ կարդանք, կրսենք, այնպես կերևի թե 454-են անդին ալ կանցնի։ Ի՞նչպես։ Ափսոսանքի իր հետևյալ բառերը մտածումի դուռ կը բանան. «Որովհետև Մովսեսը վերցավ, բայց Հեսուն չհաջորդեց... Եղիան համբարձավ, բայց Եղիսեն չմնաց...»։ Կրսենք՝ հոս ակնարկված ժամանակը Սահակի մահին հաջորդող անմիջական քանի մը տարին ըլլալու է, որովհետև այս պաչագային Սահակ—Մովսեսեն վերնալե վերջ Հեսուն՝ Հովսեփ կաթողիկոսը կը հաջորդե։ Հետևաբար Խորենացիի ակնարկությունը ի մտի ունի Հովսեփի մահեն վերջ եկեղեցական բարքերու խաթարումը, երբ Մելիտե և Մանազկերտացի կաթողիկոսներու պես ապիկարներ կուգան բազմելու Սահակի և Հովսեփի աթոռը։

Հովսեփ նահատակվեցավ 454-ին։ Եվ որովհետև վրձինի քանի մը հարվածով կը նկարե կրոնականներու այլասերման մռայլ պատկերը. «...իրենք իրենց-

մեն պատիվ դատած և ոչ Աստուծմեն կոչված, դրամով ընտրված և ոչ Սբ. Հոգով, ոսկեսեր, նախանձոտ... գայլ դարձած կը գիշատեն իրենց հոտերը։ Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվասեր, քան աստվածասեր», կրսես, որ Հովսեփի մահեն վերջ քանի մը տարի անցած ըլլալու է՝ կրոնական ասպարեզի մեջ այսպիսի անկում հառաջ գալու համար։

Համենայն դեպս, Հովսեփի մահվան թվականը, 454, միտրդ կմնա երբ կշարունակես պրպտուրդ։

Հիմա դառնանք գրքին սկիզբը։

Ահավասիկ իշխան մը, Սահակ Բագրատունի, որ Մովսես Խորենացիի գրոց բրոց ըլլալու համբավը լսեր է, առանց գինք անձամբ ճանչցած ըլլալու, նամակով կը դիմե անոր այնպիսի առաջարկով մը, որ Խորենացիի մտքին մեջ ջահեր կը վառե։ Խանդավառություններ թունդ եկած ան իշխանին կը պատասխանե, և իր պատասխանին մեջ, որ իր Պատմագրքին առաջին մեկ երկու գլուխներն են, կդդաս իր եռանդագին հրավանքը եկած առաջարկին։ «Անձեկ առաջ հոգիիդ հետ ծանոթացա այս գեղեցիկ խնդրանքիդ միջոցավ», կը սկսի Խորենացին։ Եվ ի՞նչ է խնդրանքը։ Գրել հայոց պատմություն։ Առաջին բոպեեն իսկ ան կը գիտակցի, թե աննախընթաց և շատ դժվարին գործի մը կը ձեռնարկե։

Աննախընթաց, որովհետև ոչ ոք իրմե առաջ գրի առած է հայերու ամբողջական պատմություն սկիզբեն մինչև իր օրերը։ Դժվարին, որովհետև իրեն ապրյուր ծառայելիք հայերեն գիրք գոյություն չունի (Ա, 3)։ Ոչ մինակ գործի դժվարության կը գիտակցի, այլ նաև համոզված է, որ այդպիսի ձեռնարկ գլուխ հանել կը պահանջե երկար ժամանակ. «Մանավանդ որ մեր առաջիկա գործը երկար է, իսկ մահկանացուներու ժամանակը կարճ է և անհայտ» (Ա, 7)։

Եվ հիրավի շատ երկար գործ, քանզի օտարազգի պատմարաններու և հեղինակներու գործերը պիտի կարդա՝ տեսնելու, թե հայերու մասին հիշատակություն ունի՞ն։ Եվ երբ գտնե հատ ու կտոր, ցաք ու ցրիվ, կարճ կտուր հիշատակություններ, պիտի ջանա անոնցմե հյուսել պատմություն մը, որ ըլլա բանավոր ու ամբողջական։ Ափ մը բազմագույնի խճաբարեր, որոնցմե ճանաչելի խճանկար մը պետք է կազմե։

Իսկ երբեմն այս օտար ապրյուրներու ցուցմունքները շփոթություն կը պատճառեն իրեն։ Ինչքա՞ն շվարում կա իր կողմե, երբ Լյուդիո Կրեսոս թագավորի Արտաշեսի կողմե պարտվելուն մասին կը գրե։ Այդ դեպքի շուրջ իր կարդացած գրքերուն հակոտնյա տեղեկությունները կը շփոթեցնեն գինք։ Հույն մեկ ավելի գրողներ կրսեն Կյուրոսն էր, որ հաղթահարեց Կրեսոսին, ուրիշներ կրսեն Արտաշեսն էր։ Ի՞նչ ընե խեղճ Խորենացին։ Կյուրո՞ս թե Արտաշես։ Իր ազգասիրություններ կհարթե դժվարություններ—Արտաշեսն է, և Հայաստանի թագավոր Արտաշեսը։

Իր Պատմագրքին մեջ Խորենացին չորս տասնյակ օտարազգի հեղինակներու անուններ կուտա։ Բան մը, որ ոչ մեկ ուրիշ հայ պատմագիր բրած է։ Որքա՞ն տարօրինակ կը հնչեն այդ անուններեն շատերը մեր հայերու ականջներուն. Պոլիկրատես, Հիպոդիտա, Բարգաման, Եվագարոս, Փղեգոնիոս, Կեփալիոն, Բեռոսոս, Արիդենոս, Ակամագրոս, Արիստոն Փեղդացի, Մանեթո, Բարձումա, Խոսոհրուզ, Փերմիլիանոս և այլն։

Բնականաբար, Խորենացին անոնց գրքերը իր խուցին մեջ պատրաստ չուներ, բացի թերևս մեկ կամ երկու հատը, օրինակ, Եվսեբիոսի «Քրոնիկոն» և «Եկեղեցական պատմություն», ինչպես նաև Հովսեփոսի «Հրեական հնու-

թյունք»։ Հասկնալիորեն, Սահակ իշխանեն պատվեր ստանալն վերջն է, որ կըսկսի իրեն ազբյուր ծառայելիք գրքերը փնտրել, գտնել, կարդալ։ Ու փնտրել գտնելու համար ալ ճամփորդե հոս հոն, չէ՞ որ հարուստ մեկենաս ունի։ Ան ավելի մեծ թվով գրքեր բռնած ըլլալու է, անոնց մեջեն ընտրելու իր գործածելիքները։

Զարմանալիորեն, ազբյուրներ գտնելու և գտնոնք ուսումնասիրելու տեսակետե Խորենացին մեր օրերու պատմաբաններու խղճամիտ վերաբերումը ունի։ Ազբյուրները բննել, մեկը մյուսին հետ բաղդատել, ընդունել մեկը, մերժել մյուսը. ըսել, թե ինչո՞ւ կընդունի կամ ինչո՞ւ կմերժե։ Ներկայի պատմաբան մը կրնա ըսել, թե որքա՞ն սրտմաշուք և ժամանակ սպառող գործ է այդ։ Մանավանդ հին ատեն, երբ ձեռագիրներ հազվագյուտ էին, իսկ Խորենացիի պարագային ալ Հայաստանե դուրս գտնվող մատենադարաններու մեջ փնտրելու էր սույն հունարեն գրքերը, ինչպես նաև քաղդեացի և ասորի հեղինակներու հունարեն թարգմանությունները։

Մինչև որ շրմրոնենք տաժանելի բնույթը, գրեթե ոչնչե հայոց պատմություն մը գրելու այն ձեռնարկին, երբեք պիտի չգիտնանք ատոր պատմագրեն պահանջած երկար ժամանակը։ Խորենացին ալ այդ գիտնալուն կուգե որ ընթերցողը ճանչնա այդ իրողությունը, կը սկսենք, կըսե, «միայն թե մարդին շնորհակալ ըլլան մեր կրած նեղություններու համար (Ա, 9)։

Ամանք կխորհեն, թե Խորենացին իր ծերունի տարիքին Բագրատունի իշխանեն հրահանգ ստացավ գրելու հայոց պատմությունը և որպես ապացույց կը մատնանշեն նույնինքն Խորենացիի բառերը. «Որովհետև ես ալ մարդ մը ծերացած և հիվանդոտ» (Ը, 67), ուստի կըսեն, գործը լծվելով շուտով լրացուց գործը։

Ատենոք ես ալ այդպես կը խորհեի, երբ խակ միտքս սրընթաց կարդալը աժան իմաստություն ճարելու դյուրին միջոց մը կը համարեի։

Ու այդպես խորհողներ գրության ժամանակը կը որոշեին առանց ոեէ դրժվարության։ Ինչպե՞ս։ Սահակ Բագրատունին պատերազմի մեջ կը սպանվեր 485 թ.։ Բեհ, ուրեմն, ատկե քանի մը տարի առաջ Խորենացիին դիմած ըլլալու էր, ըսենք 480 թ., կամ շատ շատ 475 թ.։ Որով ահավասիկ փնտրածդ տարեթիվը Պատմագրքի գրության մասին։

Սակայն այդպես չէ։

Խորենացին իր ծերացած և հիվանդոտ ըլլալու մասին կը գրե գրքի վերջին, և այդպես գրելեն հազիվ քանի մը էջ անդին արդեն գիրքը կը լմննա։ Եթե իշխանեն իրեն առաջարկ եղած ատեն իրապես ծերացած և հիվանդոտ ըլլար, գրքին առաջին էջեն իսկ կրսեր այդ, փոխանակ աշխույժ մարդու պես ըսելու անոր, թե քու առաջարկածդ «իմ ճաշակին ես ախորժելի է և մանավանդ իմ սովորություններուն» (Ա, 1)։ Կամ իր ծեր և հիվանդ ըլլալը հիշելու ալ ավելի տրամաբանական տեղն էր դարձյալ գրքի սկզբներուն, ուր կրսե, «Մանավանդ որ մեր առաջիկա գործը երկար է. իսկ մահկանացուներու ժամանակը կարճ է և անհայտ» (Ա, 7)։ Գրսես, մեթե ատկե ավելի հարմար տեղ կըլլա նաև ավելցնելու, «Մանավանդ որ ես ալ արդեն ծեր եմ և հիվանդոտ»։

Այս խնդրին բանավոր պատասխան մը գտնելու մեր փորձին մեջ հետևյալ հարցումը կը ցցվի մեր առաջ. Սահակ իշխան ե՞րբ դիմած կրնար ըլլալ Խորենացիին։ Պատմահոր գրքին ուշադիր ընթերցողը կը տեսնե, թե Խորենացիի և իշխանի միջև շարունակական հարաբերություն կա գրվելիք պատմագրքի վե-

բարերմամբ։ Խորենացին իր գրածը մաս առ մաս կը ղրկեր իշխանին, և այս վերջինն ալ հաճախ հարցումներ, ավելի ճիշտ պահանջներ կը ներկայացներ անոր այս կամ այն նյութի շուրջ, կամ այս կամ այն դեպքի, դեմքի մասին ալ գրելու։

Օրինակ, իշխանը կուզեր, որ Խորենացին գրե նաև պարսիկ առասպելներն Բյուրասպի Աժդահակի մասին։ Այս մեկ խնդիրքը Խորենացին շատ կը ջղայնացներ (եվ ես շնորհակալ եմ և չափազանց ուրախ որ ան կը ջղայնանա, երեւ ոչ ինչպե՞ս պիտի կրնայի այս հոդվածս գոհացուցիչ և տրամաբանական վախճանի մը հանգեցնել)։ Խորենացին ջղայնացած կը բացականչե. «Ի՞նչ կարոտություն ունես այս սուտ առասպելներուն կամ ի՞նչ կարիք այսպիսի շինծու, անմիտ և անհանճար գրույցներուն... Ի՞նչ կարոտություն ունես ասոնց, և ինչ փափաք է անբաղձալի բաներուն բաղձալը և մեզ նոր նեղություն պատճառելը։ Մենք այս կը վերագրենք քու մանկական հասակին և կը համարենք քու տհաս խակության ցանկությունն» (Ա. գրքի վերջը)։

Ահ, մեզ հանգրման հասցնելիք արահետը գտանք. «Քու մանկական հասակ և տհաս խակություն»։

Ուրեմն երբ իշխանը Խորենացիի կը դիմեր ինք դեռ իշխանիկ էր, մանկահասակ պատանի, որ տհաս խակության հարցասիրություն ունի։

Իշխանի այս պատանեկան անհամբեր հարցասիրության կը հանդիպենք գրքի մեջ մեկեկ ավելի անգամներ, օրինակ, «Բայց քու փափաքդ մենք կը տեսնենք, որ ասուածային սահմաններեն անդին կանցնի—որ ամեն բան կուզես մեկ անգամեն և ճշմարտությամբ բսված բլլա։ Իսկ մենք կամ երկար պետք է գրենք, որպեսզի ցանկացածիդ պես բլլա, կամ կարճ, որ քեզ հաճելի չբլլար։ Որովհետև քու շտապեցնելու պատճառով մենք ոչինչ չգրեցինք Աղեքսանդր Մակեդոնացու մասին» (Ա, 32)։

Ուրիշ օրինակ այս խթանող հարցասիրության. «Եվ քեզի ալ, ինչպես շատ անգամ, հիմա ալ կաղաչեմ, մեզ մի հարկադրեր ավելորդ բաներ գրելու, մի գուցե այդպիսի քիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավասար ամբողջ աշխատությունը անպետք ու ավելորդ մի գործ դառնա, որ հավասարապես վատնդ է ինձի ալ, քեզի ալ» (Բ, 64)։

Ինչպես շատ անգամ։ Որքա՛ն պերճախոս է։

Ուրիշ օրինակ. «Այս պատճառով էլ մենք բան չենք գրեր վերջին Տիգրանի կողմն հաստատված ցեղերու մասին, թեև շատ անգամ ասոր համար մեզի աղաչես» (Բ, 64)։

Թեև շատ անգամ սեզի աղաչես։

Ուրիշ օրինակ. «Այս բաները պատմել մեզ հարկադրեց քու ավելորդ խնդիրքը» (Գ, 35)։

Կը տեսնե՞ք, թե գրվելիք պատմության գրքի շուրջ որքան շարունակական տուր և առ կա իշխանի և Խորենացիի միջև։ Երբ մաս առ մաս իր գրվածները կը ղրկեր անհամբեր Բագրատունիին, մարդիկ աչքերուն առջև կուգա Խորենացին, որ բարի քրիստոնյա, երեսը կը խաչակնքե կարծես բսելու. «Եթե այս անգամ առանց հարցումի ճողոպրիմ, բախտավոր եմ»։

Այս կերպ գրելն ալ ավելորդ ժամանակ կը պահանջե։ Կարկառուն օրինակ մը ունենք Պատմագրքի մեջ, ուր Խորենացին, գրածը իշխանին ղրկելե վերջ, կը սպասե անոր պատասխանին հաջորդ գլուխը գրելու համար։

Ա գիրք 12-րդ գլուխի վերջին՝ Խորենացին Արամի հիշատակությունը կրնե և այդ գլուխը կը վերջացնե հետևյալ բառերով. «Բայց Արամի ընդարձակ պատ-

մությունն ու քաջության գործերը, թե ինչպես և որ ժամանակ կատարվեցան, եթե կուզես այս գրքեն դուրս կը գետեղենք, կամ բաց կը թողունք, իսկ եթե ոչ՝ կը գետեղենք նույնիսկ հոս»։

Խորենացին կը ղրկե այս գլուխը իշխանին և կսպասե անոր պատասխանին։ Իշխանը կուզե, որ Արամի մասին գրվի այս գրքի մեջ և ըստ այնմ կը հաղորդե Խորենացիին։ Բագրատունիին այս պատասխանը և Խորենացիի համակերպվելը դյուրությամբ կը կռահենք հաջորդ գլուխի առաջին քանի մը տողերուն մեջ իսկ. «Եվ որովհետև մեզի հաճելի թվեցավ քո հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, քան ուրիշներեն առաջարկված ուրախություններն ու կերուխումը, ուստի համաձայնեցինք կարճառոտ մեջ բերել ղրույցները Հայկյան Արամի վարած պատերազմներու մասին»։

Ա՜հ, շատ երկար և ծանր աշխատանք էր, բայց Խորենացիի համար հույժ գերադասելի, քան ուրիշներու առաջարկած ուրախությունն ու կերուխումը։

Այժմ կրնանք քիչ մը ավելի հաստատ քայլով մոտենալ մեր միտքը չարչարող հարցին—երբ Խորենացին հրահանգ ստացավ գրելու։

«Մանկական հասակ և տհաս խակություն»։

Սահակ Բագրատունին 485-ին, երբ պատերազմի մեջ կը սպանվեր, Հայաստանի ընդհանուր կառավարիչն էր։ Բնականաբար մանկահասակ մեկը մարզպան չէր կրնար ըլլալ։ Ան տարիքը առած մեկը ըլլալու էր։ Բայց ոչ ալ այնքան մը ծեր, քանզի պատերազմի կռիվներուն կը մասնակցի։ Ըսենք միջին տարիքով, օրինակ 40 կամ 45 տարեկան, երբ կրնա սուր ու նիզակ գործածել։ Հիմա ետ տանենք զինք 20 կամ 25 տարի, երբ ան 15—20 տարեկան պատանի է և Խորենացիին դիմած իր սքանչելի առաջարկով։

Ուրեմն ամենահավանական թվականը 460—465 տարիներու մեջ կրնանք ընդունել՝ երբ Խորենացին Սահակ իշխանիկեն հրահանգ կը ստանար գրելու Հայոց պատմությունը։ Եվ ան հոգեկան հրճվանքով կը լծվի այդ ձեռնարկին, որուն դժվարություններուն առաջին օրեն իսկ ծանոթ է։ Այս աշխատանքը տևած ըլլալու է տասը կամ ավելի տարի, մինչև 470-ական թվականները։

Հետևաբար մեր քննությունը ավելի հավանական թվական մը ցույց չտար Պատմագրքի հորինման սկսելուն քան 460—465 թթ. միջև։

Եվ սա որքա՜ն բարեպատեհ է, երբ մտածենք, թե մեր այս օրերուն կը զուգադիպի աննման Պատմագրքի 1500-ամյակը։

О ДАТЕ НАПИСАНИЯ «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

ГРАНТ К. АРМЕН (Калифорния, США)

(Резюме)

В настоящее время, когда Хоренаци безоговорочно считается автором V века, весьма интересно выяснить, в какие годы написана его «История Армении». Историки последующих веков не дают каких-либо сведений, которые способствовали бы выяснению этого вопроса. Основываясь на том факте, что меценат Мовсеса Хоренаци князь Саак Багратуни был убит на войне в 485 г., некоторые арменисты полагают, что

он должен был обратиться к Хоренаци с просьбой написать «Историю» за несколько лет до своей смерти и из этого делают вывод, что книга написана в 470—480 гг.

Для установления более или менее точной даты написания «Истории Армении» мы имеем лишь некоторые факты, сообщенные самим Хоренаци,—год смерти Месропа Маштоца (440) и католикоса Овсепа (454), а также ряд упоминаний историка о том, что между ним и князем Саком Багратуни велась частая и оживленная переписка по поводу различных событий в истории Армении и сопредельных стран.

Исходя из этих фактов, а также учитывая то обстоятельство, что по словам Хоренаци князь Саак был «молодым человеком», когда обращался к историку с просьбой написать книгу, можно сделать следующие заключения:

1. Так как князь Саак был убит в 485 г., надо полагать, в возрасте 40—50 лет, а «молодым человеком» он был за 20—25 лет до этого, следовательно, его первое обращение к Хоренаци имело место, вероятно, в 460—465 гг.

2. Хоренаци работал над своей «Историей» долго, может быть 10 лет и даже больше, т. е. до 470-х годов. Отсюда становится ясной причина того, почему в конце своей книги он говорит о том, что стар и болен.